Հասցեատեր՝
«Ուրարտու ՖԱ» ՄՀԿ
Էլեկտրոնային փոստի հասցե՝ fcurartuyerevan@gmail.com

«Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» հասարակական կազմակերպության

Կարգապահական և էթիկայի կոմիտեի

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

26.09.2025թ.

Նախագահ	Կարեն Հովհաննիսյան
Անդամներ	Արփի Լազարյան
	Հենրիկ Խաչատրյան

Վարույթ՝	ՊԼ-035
Խախտում՝	1. Խոտածածկի որակի անհամապատասխանությունը ՀՖՖ Ենթակառուցվածքային կանոնակարգի չափանիշներին (Հավելված 1 Ա, 78-րդ կետ) 2. Խաղի ժամանակահատվածում դաշտի տեր ակումբի անվտանգության աշխատակիցների ոչ պատշաճ, թերի աշխատանք կատարելը (Հավելված 1 Ա, 34-րդ կետ)
Առաջնություն՝	Fastex Պրեմիեր Լիգա
Խաղ՝	«Ուրարտու» - «Արարատ», 19.09.2025թ.

ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կոմիտեն որոշեց՝

1. Հիմք ընդունելով ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կանոնակարգի (2025թ. խմբագրություն) 20-րդ հոդվածի 4-րդ կետը՝«Ուրարտու ՖԱ» ՄՀԿ-ի նկատմամբ որպես պատասխանատվության միջոց կիրառել «Նախազգուշացում»:
   «Նախազգուշացում» ստացած ֆուտբոլային սուբյեկտի կողմից նույն մրցաշրջանի ընթացքում երկրորդ և ավելի անգամ նույն կարգապահական խախտումը թույլ տալու դեպքում «նախազգուշացում» կարգապահական պատասխանատվության միջոցն այլևս չի կարող կիրառվել:
   Հիմք ընդունելով ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կանոնակարգի (2025թ. խմբագրություն) 27-րդ հոդվածը՝ հրահանգել «Ուրարտու ՖԱ» ՄՀԿ-ին խաղադաշտի որակն այսուհետ համապատասխանեցնել ՀՖՖ Ենթակառուցվածքային կանոնակարգով սահմանված չափանիշներին:

2. Հիմք ընդունելով ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կանոնակարգի (2025թ. խմբագրություն) 20-րդ հոդվածի 4-րդ կետը՝«Ուրարտու ՖԱ» ՄՀԿ-ի նկատմամբ որպես պատասխանատվության միջոց կիրառել «Նախազգուշացում»:
«Նախազգուշացում» ստացած ֆուտբոլային սուբյեկտի կողմից նույն մրցաշրջանի ընթացքում երկրորդ և ավելի անգամ նույն կարգապահական խախտումը թույլ տալու դեպքում «նախազգուշացում» կարգապահական պատասխանատվության միջոցն այլևս չի կարող կիրառվել:
Հիմք ընդունելով ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կանոնակարգի (2025թ. խմբագրություն) 27-րդ հոդվածը՝ հրահանգել «Ուրարտու ՖԱ» ՄՀԿ-ին այսուհետ ապահովել խաղի ժամանակահատվածում անվտանգության աշխատակիցների պատշաճ աշխատանք կատարելը:

ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կոմիտեի նախագահ՝

Կարեն Հովհաննիսյան

Ծանուցում

- ՀՖՖ կարգապահական և էթիկայի կոմիտեի որոշումների բողոքարկման համար որոշմամբ պատասխանատվության միջոցի ենթարկված ֆուտբոլային սուբյեկտը պետք է բողոքարկման վերաբերյալ գրավոր հայտարարություն ներկայացնի Կարգապահական գրասենյակ (disciplinary@ffa.am էլեկտրոնային հասցեով)՝ ի գիտություն Բողոքարկման կոմիտեին, համապատասխան որոշման մասին ծանուցվելուց հետո 3 (երեք) օրվա ընթացքում:
- Որոշմամբ հիմքերի տրամադրման համար համապատասխան Ֆուտբոլային սուբյեկտը պետք է բողոքարկման հայտարարություն ներկայացնելու հետ միասին ներկայացնի որոշման հիմքերը պատվիրելու համար նախատեսված 50,000 ՀՀ դրամի չափով տուրքի վճարումը հավաստող ապացույց: Նշված վճարը վերադարձման ենթակա չէ:
- Բողոքարկման հայտարարությունը ներկայացնելուց հետո 5 (հինգ) օրվա ընթացքում (այն դեպքում, երբ Ֆուտբոլային սուբյեկտը դիմել է որոշման հիմքերը ստանալու խնդրանքով՝ բողոքարկման 5-օրյա ժամկետը սկսում է հաշվարկվել այդ հիմքերը ստանալու պահից) Ֆուտբոլային սուբյեկտը նույն կարգով պետք է ներկայացնի հիմնավորված բողոքը, ինչպես նաև բողոքի ներկայացման համար նախատեսված համապատասխան տուրքը վճարելու վերաբերյալ ապացույցը: Բողոքարկման վճարը կազմում է 100,000 ՀՀ դրամ և ենթակա է վերադարձման յուրաքանչյուր դեպքում ԲԿ որոշմամբ սահմանված չափով՝ ըստ բավարարված պահանջների համամասնության:
- Նշված ժամկետներում բողոքարկման գրավոր հայտարարություն չներկայացնելը հանգեցնում է որոշման վերջնական և պարտադիր դառնալուն, և համարվում է, որ կողմը հրաժարվել է բողոք ներկայացնելու իր իրավունքից: